



Կ Ա Ր Գ

«Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների առաջարկներն ընդունելու մասին

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Փաստաբանների պալատ**) 2017 թվականի փետրվարի 11-ին կայանալիք հերթական ընդհանուր ժողովում «Փաստաբանի օր» սահմանելու մասին օրակարգային հարցով «Փաստաբանի օր» սահմանելու համար փաստաբանների կողմից **ամսվա և ամսաթվի** ներկայացված նշումով առաջարկներն ընդունելու ընթացակարգը:

2. Փաստաբանները «Փաստաբանի օր» սահմանելու վերաբերյալ իրենց առաջարկները համապատասխան հիմնավորումներով ներկայացնում են Փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի նախագահին՝ անհատական կամ խմբային կարգով՝ 2017 թվականի հունվարի 14-ից (ներառյալ) մինչև 2017 թվականի հունվարի 19-ը (ներառյալ):

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված ժամկետում «Փաստաբանի օր» սահմանելու վերաբերյալ առաջարկ կամ առաջարկներ կարող է ներկայացնել նաև «Փաստաբանի օր» սահմանելու նպատակով Փաստաբանների պալատի կողմից ձևավորված աշխատանքային խմբի (**այսուհետ՝ Աշխատանքային խումբ**) համակարգողը: Աշխատանքային խմբի համակարգողի ներկայացված առաջարկները պետք է պարունակեն նաև հիմնավորումներ:

4. Յուրաքանչյուր փաստաբան կարող է անհատական կամ խմբային կարգով ներկայացնել «Փաստաբանի օր» սահմանելու մասին միայն մեկ առաջարկ, բացառությամբ Աշխատանքային խմբի համակարգողից, որը կարող է ներկայացնել մեկից ավել առաջարկներ:

5. Առաջարկները ներկայացվում են առձեռն կամ փոստով: Հայաստանի Հանրապետությունից բացակայող փաստաբանը կարող է իր ստորագրված առաջարկն ուղարկել info@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Խմբային առաջարկներ ներկայացնելու դեպքում համապատասխան առաջարկում պետք է նշված լինեն առաջարկը ներկայացնող բոլոր փաստաբանների անունները, ազգանունները և փաստաբանական գործունեության արտոնագրերի համարները: Խմբային առաջարկի տեքստը պետք է ստորագրված լինի այն ներկայացնող (առաջարկին միացող) բոլոր փաստաբանների կողմից:

7. Առաջարկը չի ընդունվում, եթե՝

- առաջարկում նշված չէ ամիսը և ամսաթիվը.
- ներկայացված չէ առաջարկի հիմնավորումը.
- առաջարկի հիմնավորումը որևէ կերպ չի առնչվում փաստաբանությանը.
- առաջարկը ստորագրված չէ փաստաբանի կողմից.
- խմբային առաջարկի դեպքում՝ պահպանված չէ սույն կարգի 6-րդ կետի պահանջը:

8. Առաջարկի ընդունումը մերժելու դեպքում Հաշվիչ հանձնաժողովի նախագահը մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է առաջարկի հեղինակին՝ մերժման պատճառների մասին:

9. Առաջարկն ընդունելուց հետո, հաշվիչ հանձնաժողովի նախագահը Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակում է ստացված առաջարկը և հիմնավորումը:

10. Առաջարկներ ընդունելու վերջնաժամկետից հետո ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի նախագահը Փաստաբանների պալատի կայքէջում ժամանակագրական հերթականությամբ հրապարակում է «Փաստաբանի օր» սահմանելու վերաբերյալ այն առաջարկները (ամսաթվերը), որոնք ներառվելու են ընդհանուր ժողովի քվեաթերթիկում:

* * *